ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 08/20

ք. Գյումրի «06» ապրիլի 2020թ.

§Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան¦ ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ք. Ահարոնյանի, որը գործում էկանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և §Գ.Շահպարոնյան¦ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Գ. Շահպարոնյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկԳնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են ***10*** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***20*** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 222 900 /երկու հարյուր քսաներկու հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

(հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության ___2___ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի՝ պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում,պայմանով, որԳնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով իսկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

---

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
§Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան¦ ՊՈԱԿ	§Գ. Շահպարոնյան¦ՍՊԸ
ք. Գյումրի, §Անի¦թաղ. 11փ 5/2	ք. Գյումրի Թբիլիսյան խճ. 43 շ. 26 բն.
ՀՎՀՀ 05536355	ՀՎՀՀ 05523061
Հ/Հ 9002180005872950	Հ/Հ 2050122002051001
Գյումրիի գանձապետական բաժանմունք	§Ինեկոբանկ¦ ՓԲԸ Գյումրու մ/ճ
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Տնօրեն՝ Գ. Ահարոնյան	Տնօրեն՝ Գ.Շահպարոնյան
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«06» ապրիլի 2020 թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ08/20 ծածկագրով պայմանագրի

համարը	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատակարարման				
								հասցեն	4	5	8	9
		Համակարգչային սարքավորումներ և նյութեր										
1	30234400	Խտասկավառակ DVD	4,8 GB ծավալով ինֆորմացիայի արտաքին կրիչ սկավառակ	հատ	160	4000	25	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	12		5	8
2	30234300	Խտասկավառակ CD	750 MB ծավալով ինֆորմացիայի արտաքին կրիչ սկավառակ	հատ	120	3000	25	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2		12	5	8
3	30200000	Խտասկավառակի տուփ	Սկավառակապահիչ պլաստմասե, կափարիչը թափանցիկ, նախատեսված մեկ սկավառակի պահպանման համար	հատ	150	7500	50	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	12	12	10	16
4	30237411	Մկնիկ Genius (USB, սեվ)-00001	Genius (USB, սեվ)	հատ	2500	15000	6	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	3			3
5	30237100	Սնուցման լար L-2մ Hosvv-F 3GLP 34A 0.75մմ/ք 300-500	Համակարգչի հոսանքի լար խրոցով	հատ	1500	30000	20	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	10		3	7
6	30237300	Թերմոմածուկ 0.3մգ	Բազմակոմպոնենտ պլաստիկ մասսա, որը բարելավում է մայր սալիկի և հովացնող համակարգի միջև կապը: Ջերմոհաղորդականությունը 5-10վտ/մ°Կ Հոսունությունը՝ 300-500Պա՝վրկ	հատ	500	3000	6	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/34	2		2	2
7	30232480	Կրիչ արտաքին Expansion SERGATE 2,5" 2տբ	Կրիչ արտաքին Expansion SERGATE 2,5" 2տբ	հատ	46000	46000	1	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1			
8	30234640	կրիչ 16գբ	Ծավալ - 16 GB Արագություն - 100MB/s read Միակցման տեսակ - USB 3.0	հատ	4000	12000	3	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	3			
		Ընդամենը				**120500**						
		Գրասենյակային մեքենաներ, սարքավորումներ և նյութեր										
9	30121470	տոներ Samsung	Տոներ Samsung SCX 2կգ	կգ	15000	30000	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1			1
10	30121460	Քարտրիջ Samsung SCX 3200	Քարտրիջ Samsung SCX 3200	հատ	10000	20000	2	ք. Գյումրի Անի թ.	1			1

								11փ 5/2				
11	30121460	Քարտրիջ H83A	Քարտրիջ H83A	հատ	4500	9000	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1			1
12	30121460	քարթրիջ 83A/մագնիսական թմբուկ//լավ որակի/	քարթրիջ 83A/մագնիսական թմբուկ//լավ որակի/	հատ	3000	9000	3	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1		1	1
13	30121390	թմբուկ 83A	թմբուկ 83A	հատ	3000	6000	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1			1
14	30121460	Քարթրիջ գունավոր տպիչի	Քարթրիջ HP LJ Color CP1525N CE321A(N128A), Cyan	հավաք	7000	14000	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1			1
15	30121470	Տոներ գունավոր	Այն կարող է տպել մինչև 2300 էջ, 5% ծածկույթով	հավաք	3200	6400	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1			1
16	30121450	Չիպ քարթրիջի HP CLJ Univers MAGENTA CC533A/CE263/CE403/413/CF213/CE743	Չիպ քարթրիջի HP CLJ Univers MAGENTA CC533A/CE263/CE403/413/CF213/CE743	հատ	1000	2000	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1			1
17	30121450	Չիպ քարթրիջի HP CLJ Univers YELLOW CC532A/CE262/CE402/412/CF212/CE742	Չիպ քարթրիջի HP CLJ Univers YELLOW CC532A/CE262/CE402/412/CF212/CE742	հատ	1000	2000	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1			1
18	30121450	Չիպ քարթրիջիHP CLJ UniversCYAN CC531A/CE261/CE401/411/CF211/CE741	Չիպ քարթրիջիHP CLJ UniversCYAN CC531A/CE261/CE401/411/CF211/CE741	հատ	1000	2000	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1			1
19	30121450	Չիպ քարթրիջի HP CLJ Univers BLACK CC530A/CE260/CE400/410/CF210/CE740	Չիպ քարթրիջի HP CLJ Univers BLACK CC530A/CE260/CE400/410/CF210/CE740	հատ	1000	2000	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1			1
		Ընդամենը				103400						

Մատակարարման ժամկետը. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվեր ստանալուց հետո ամենաուշը՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳՆՈՄ

§Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան¦ ՊՈԱԿ
ք. Գյումրի, §Անի¦թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05536355
Հ/Հ 9002180005872950
Գյումրիի գանձապետական բաժանմունք

(ստորագրություն)
Տնօրեն Ք. Ահարոնյան
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

§Գ. Շահպարոնյան¦ՍՊԸ
ք. Գյումրի Թրիլիսյան խճ. 43 շ. 26 բն.
ՀՎՀՀ 05523061
Հ/Հ 20501220020510 01
§Ինեկոբանկ¦ ՓԲԸ Գյումրու մ/ճ

(ստորագրություն)
Տնօրեն Գ. Շահպարոնյան Կ.Տ.

*լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև նախագիծը մատակարարին ուղարկելը:

Հավելված N 2
«06» ապրիլի 2020թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 08/20ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Հապրանքի

Համարը	միջանցիկծածկ ագիրը՝ ըստԳՄԱդաս ակարգ ման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	Փետրվար ապրիլ	Մարտ մայիս	Ապրիլ հունիս	Մայիս հուլիս	Հունիս օգոստոս	Հուլիս սեպտեմբեր	Օգոստոս հոկտեմբեր	Սեպտեմբեր նոյեմբեր	Հոկտեմբեր դեկտեմբեր	Նոյեմբեր դեկտեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1-8	***30200000***	**Համակարգչային սարքավորումներ նյութեր**				85220	88460	16500	88460	96860	120500	120500	120500	120500	120500
9-19	***30120000***	**Գրասենյակային մեքենաներ, սարքավորումներ և նյութեր,**				49700	49700	49700	49700	52700	102400	102400	102400	102400	102400

* *Վճարման են թակգումարներըներկայացվում են աճողականկարգով:*

ԳՆՈՂ

§Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան¦ ՊՈԱԿ
ք. Գյումրի, §Անի¦թաղ. 11ի 5/2
ՀՎՀՀ 05536355
Հ/Հ 9002180005872950
Գյումրիի գանձապետական բաժանմունք

(ստորագրություն)
Տնօրեն՝ Ք. Ահարոնյան
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

§Գ. Շահպարոնյան¦ՍՊԸ

ք. Գյումրի Թբիլիսյան խճ. 43 շ. 26 բն.
ՀՎՀՀ 05523061
Հ/Հ 2050122002051001
§Ինեկոբանկ¦ ՓԲԸ Գյումրու մ/ճ

(ստորագրություն)
Տնօրեն Գ.Շահպարոնյան

Հավելված N 3
«06» ապրիլի 2020թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 08/20ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ

Պատվիրատու

Հավելված N 3
«06» ապրիլի 2020թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ08/20 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ
§Գ. Շահպարոնյան¦ՍՊԸ
ք. Գյումրի Թբիլիսյան խճ. 43 շ. 26 բն.
hh2050122002051001
§Ինեկոբանկ¦ՓԲԸ Գյումրու մ/ճ
հվհh05523061
տնօրեն՝
________________Գ. Շահպարոնյան

Պատվիրատու
§Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան¦ ՊՈԱԿ
ք. Գյումրի, §Անի¦ թաղ. 11փ 5/2
hh900218000587295О
Գյումրիիգանձապետականբաժանմունք
Յվhh05536355
Տնօրեն՝
________________Ք. Աիարոնյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§09¦ §ապրիլի¦ 2020 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագիր**

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «06» «ապրիլի» 2020թ.

Պայմանագրիհամարը՝ ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ08/20

ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելով «09» «ապրիլի» 2020թ. դուրս գրված NԲ6909441878 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1.	Խտասկավառակ DVD	4,8 GB ծավալով ինֆորմացիայի արտաքին կրիչ սկավառակ	12	12	30.04.2020	09.04.2020	1.92	30.06.2020
2.	Խտասկավառակի տուփ	Սկավառակապահիչ պլաստմասսե, կափարիչը թափանցիկ, նախատեսված մեկ սկավառակի պահպանման համար	12	12	30.04.2020	09.04.2020	1.80	30.06.2020
3.	Մկնիկ Genius (USB, սև)	Genius Orion 300 (USB, սև)-00001	3	3	30.04.2020	09.04.2020	7.50	30.06.2020

4.	Սնուցման լար L-2մ Hosvv-F 3GLP 34A 0.75մմ/բ300-500	Համակարգչի հոսանքի լար խրոցով	10	10	30.04.2020	09.04.2020	15.00	30.06.2020
5.	տոներ Samsung	Տոներ Samsung SCX 2կգ	1	1	30.04.2020	09.04.2020	15.00	30.06.2020
6.	Քարտրիջ Samsung SCX 3200	Քարտրիջ Samsung SCX 3200	1	1	30.04.2020	09.04.2020	10.00	30.06.2020
7.	Քարտրիջ H83A	Քարտրիջ H83A	1	1	30.04.2020	09.04.2020	4.50	30.06.2020
8.	քարթրիջ 83A/մագնիսական թմբուկ//լավ որակի/	քարթրիջ 83A/մագնիսական թմբուկ//լավ որակի/	1	1	30.04.2020	09.04.2020	3.00	30.06.2020
9.	թմբուկ 83A	թմբուկ 83A	1	1	30.04.2020	09.04.2020	3.00	30.06.2020
10.	Քարթրիջ գունավոր տպիչի	Քարթրիջ HP LJ Color CP1525N CE321A(N128A), Cyan	1	1	30.04.2020	09.04.2020	7.00	30.06.2020
11.	Տոներ գունավոր	Այն կարող է տպել մինչեւ 2300 էջ, 5% ծածկույթով եւ 0.5% -ից ցածր անբարենպաստ տեմպերով, ինչը շատ արդյունավետ է	1	1	30.04.2020	09.04.2020	3.20	30.06.2020
12.	Թերմոմածուկ 0.3մգ	Բազմակոմպոնենտ պլաստիկ մասսա, որը բարելավում է մայր սալիկի և հովացնող համակարգի միջև կապը: Ջերմոհաղորդականությունը 5-10վտ/մ*Կ Հոսունությունը՝ 300-500Պա*վրկ	2	2	30.04.2020	09.04.2020	1.00	30.06.2020
13.	Չիպ քարթրիջի HP CLJ Univers MAGENTA CC533A/CE263/CE403/413/CF213/CE743	Չիպ քարթրիջի HP CLJ Univers MAGENTA CC533A/CE263/CE403/413/CF213/CE743	1	1	30.04.2020	09.04.2020	1.00	30.06.2020
14.	Չիպ քարթրիջի HP CLJ	Չիպ քարթրիջի HP CLJ Univers YELLOW	1	1	30.04.2020	09.04.2020	1.00	30.06.2020

	Univers YELLOW CC532A/CE262/CE402/412/CF212/CE742	CC532A/CE262/CE402/412/CF212/CE742						
15.	Չիպ քարթրիջիHP CLJ UniversCYAN CC531A/CE261/CE401/411/CF211/CE741	Չիպ քարթրիջիHP CLJ UniversCYAN CC531A/CE261/CE401/411/CF211/CE741	1	1	30.04.2020	09.04.2020	1.00	30.06.2020
16.	Չիպ քարթրիջի HP CLJ Univers BLACK CC530A/CE260/CE400/410/CF210/CE740	Չիպ քարթրիջի HP CLJ Univers BLACK CC530A/CE260/CE400/410/CF210/CE740	1	1	30.04.2020	09.04.2020	1.00	30.06.2020
17.	Կրիչ արտաքին Expansion SERGATE 2,5" 2տբ	Կրիչ արտաքին Expansion SERGATE 2,5" 2տբ, արտադրված է 08,2019թ, անսահմանափակ օգտագործման ժամկետ	1	1	30.04.2020	09.04.2020	46.00	30.06.2020
18.	Կրիչ 16գբ	Ծավալ - 16 GB Արագություն - 100MB/s read Համակցման տեսակ - USB 3.0	3	3	30.04.2020	09.04.2020	12.00	30.06.2020

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

Գ. Շահպարոնյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

Հ. Գրիգորյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված3.1

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
9	Ապրիլ	2020 թ.		Բ	6909441878
[4] Առաքման ամսաթիվ					
9	Ապրիլ	2020 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)
[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	5	5	2	3	0	6	1		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										

[10] Անվանումը	Գ.ՇԱՀՊԱՐՈՆՅԱՆ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)	
[11] Բանկային տվյալները	Ինեկոբանկ ՓԲԸ Գյումրու մ/ճ	N 2050122002051001
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ Թբիլիսյան խճ. 43 շ. 26 բն.	
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	Գյումրի Սայաթ-Նովա 5ա / 2	
[14] Լրացուցիչ տվյալներ		

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի										
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	5	5	3	6	3	5	5		
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										

[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ)		
[18] Բանկային տվյալները		N	
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ Անի թաղ. 11փ. 5 2		
[20] Լրացուցիչ տվյալներ			
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	
[22] Մատակարարման (առաքման) եղանակը	ինքնատեղափոխում		
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ Անի թաղ. 11փ. 5 2		

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնաս. հարկ	Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Խտասկավառակ DVD	հատ	12	160		1920		
2	Խտասկավառակի տուփ	հատ	12	150		1800		
3	Սկնիկ Genius (USB, սև)	հատ	3	2500		7500		
4	Սնուցման լար L-2մ Hosvv-F 3GLP 34A 0.75մմ/ք 300-500	հատ	10	1500		15000		
5	Տոներ Samsung 2կգ	հատ	1	15000		15000		
6	Քարտրիջ Samsung SCX 3200	հատ	1	10000		10000		
7	Քարտրիջ H83A	հատ	1	4500		4500		
8	Քարթրիջ 83A/մագնիսական թմբուկ//լավ որակի/	հատ	1	3000		3000		
9	Թմբուկ 83A	հատ	1	3000		3000		
10	Քարթրիջ գունավոր տպիչի	հավաք	1	7000		7000		

11	Տոներ գունավոր	հավաք	1	3200		3200		
12	Թերմոմածուկ 0.3մգ	հատ	2	500		1000		
13	Չիպ քարթրիջի HP CLJ Univers MAGENTA	հատ	1	1000		1000		
14	Չիպ քարթրիջի HP CLJ Univers YELLOW	հատ	1	1000		1000		
15	Չիպ քարթրիջիHP CLJ UniversCYAN	հատ	1	1000		1000		
16	Չիպ քարթրիջի HP CLJ Univers BLACK	հատ	1	1000		1000		
17	Կրիչ արտաքին Expansion SERGATE 2,5" 2տբ	հատ	1	46000		46000		
18	Կրիչ 16գբ	հատ	3	4000		12000		
Ընդամենը						134920		

Առաքող՝ **SHAHPARONYAN GRIGORI 3208600224**

(անունը, ազգանունը)

Ստացող **AHARONYAN KNARIK 5708640316**

(անունը, ազգանունը)

09/04/2020 19:13:36

09/04/2020 20:44:57